

ԿԱՐԾԻՔ

Տեր-Վարդանյան Ժենյա Վազգենի «Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը հայալեզու լսարանում» թեմայով թեկնածուական ատենախոսության՝ ներկայացված ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտության ուսումնասիրության սրընթաց առաջընթացի, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, միջազգային մակարդակով տնտեսական և քաղաքական հարաբերությունների համատեքստում, չափազանց կարևոր է դառնում օտար լեզվի և, հատկապես, անգլերենի, իմացությունը գործընկերների միջև արդյունավետ հաղորդակցություն իրականացնելու նպատակով:

Քիզնես անգլերենը դառնում է կենսական գործիք հարաբերություններ կառուցելու և կարգավորելու համար գործարարների, մասնագետների և միջազգային ընկերությունների աշխատակիցների միջև: Դա օտար լեզվով գրագետ հաղորդակցվելու և բանակցելու, պայմանագրեր կնքելու կարողություն է, որի արդյունավետությունը, լեզվական միջոցների ճիշտ կիրառումը բարձրացնում է նախ և առաջ բանակցողի, այնուհետև այն կազմակերպության վարկանիշը, որը նպատակադրված է հասնել մասնագիտական հաջողությունների:

Լեզուն որոշում է նաև քիզնես գործընկերների կերպարը և մասնագիտական մակարդակը՝ միաժամանակ հասնելով շահույթի աճին և ընկերության զարգացմանը:

Գործարար անգլերենը կարևոր բաղադրիչ է խոշոր քիզնեսի ոլորտում: Այն թույլ է տալիս բանավոր և գրավոր ձևով իրականացնել գործարար հաղորդակցում այն բազմաթվանդակ քիզնես-հոսանքի մեջ, որը ենթադրում է համալիր լեզվական գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառում:

Այս տեսանկյունից Ժենյա Վազգենի Տեր-Վարդանյանի ատենախոսությունը չափազանց կարևոր է, քանի որ այն քննում է վերոգրյալ խնդիրները Հայաստանի Հանրապետության անգլերենի ուսուցման համապատեքստում, քանի որ հետազոտության

առարկա է դարձնում ուսուցման հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդական համակարգը: Հատկապես հետհամավարակային շրջանում մեթոդական համակարգի արդյունավետ կիրառումն ավելի քան արդիական է, մեթոդները հարմարեցվել են նոր իրականությանը և այս փուլում անցնում են արդյունավետության գնահատման նոր փորձաշրջան:

Օտար լեզվի ուսուցումը բարդ և երկարատև գործընթաց է, հետևաբար, այն ենթադրում է, նախ և առաջ, արդյունավետ ռազմավարությունների, մեթոդների, գործընթացների և գործիքների ճիշտ կիրառում, որը և կանխորոշումը է սովորողի հաջողությունը և օտար լեզվով կարողությունների ձևավորումը: Այստեղ կարևոր են դառնում ճանաչողական և վերճանաչողական գործընթացները, մասնավորապես, հիշողությունը, սովորելու ներունակությունը, փոխգործակցության արդյունավետությունը սովորեցնողի և սովորողի միջև, լեզվի և այլ գիտակարգերի միջև գոյություն ունեցող և մշտապես զարգացող կապերը, որոնք ազդում են օտար լեզվի, այդ թվում, գործարար անգլերենի ուսուցման համար ընտրված մոդելի, մոտեցումների և մեթոդների վրա:

Ակնհայտ է, որ ներկայումս բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները գիտակցում են գործարար հաղորդակցական կարողությունները զարգացնելու և դրանք հետագայում կիրառելու անհրաժեշտությունը:

Իր թեկնածուական ատենախոսության ներածության մեջ Ժենյա Տեր-Վարդանյանը հստակ ներկայացնում է աշխատանքի նպատակը, առաջադրվող խնդիրները, գլուխների կառուցվածքը՝ ենթագլուխներով, որում առկա է տրամաբանական հաջորդականություն: Հեղինակը ներածության մեջ ներկայացնում է նաև ատենախոսության վարկածը և դրույթները, որոնք ներկայացրում է հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության հեղինակն իր աշխատանքի առաջին գլխում՝ վերնագրված «Գործարար անգլերենը մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում», քննում է մասնագիտական կողմնորոշման անգլերենի և գործարար անգլերենի ուսուցման նպատակներն ու խնդիրները, «մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառության» հիմնախնդիրը գործարար անգլերենի դասընթացում, քննարկում է ԹՁ Հաթչինսոնի և Վոթերսի մոտեցումը մասնագիտական կողմնորոշման դասընթաց պլանավորելու նպատակով, որտեղ մասնագետները առանձնացնում են լեզվի նկարագրությունը և լեզվի դասավանդումը, և ներկայացնում, թե ինչպես պետք է սովորել լեզու մասնագիտական նպատակների համար: ԺՁ Տեր-Վարդանյանը նաև խոսում է

մասնագիտական կողմնորոշման դասընթացի մեջ պահանջմունքների վերլուծության մասին: Ատենախոսն իրավացիորեն տարբերում է մասնագիտական կողմնորոշման և գործարար անգլերենի դասընթացները և նշում, որ վերջինս ընդհանուր և կոնկրետ բովանդակության խառնուրդ է, և ինչպես EAP-ն է բաժանվում «Անգլերենն ընդհանուր ակադեմիական նպատակների համար»/English for General Academic Purposes և «Անգլերենը հատուկ ակադեմիական նպատակների համար»/English for Specific Academic Purposes, այնպես էլ տարբերակում է «Անգլերենը ընդհանուր գործարար նպատակների համար»/English for General Business Purposes (EGBP) և «Անգլերենը հատուկ գործարար նպատակների համար»/English for Specific Business Purposes (ESBP): Սակայն Ատենախոսն իր աշխատանքում չի ասում, թե ինչ ծրագրով են ուսումնասիրել անգլերենն այն ուսանողները, որոնց շրջանում անցկացվել են հարցումները: ԺՊ Տեր-Վարդանյանը նաև մանրամասնորեն խոսում է գործարար անգլերենի ուսումնասիրության ընտրության համար հիմք հանդիսացող լեզվախմբության մակարդակը, տարիքն ու մշակութային նախադրյալները և նախապատվությունները, դասավանդման մեթոդիկայի ընտրությունը: Ըստ ատենախոսության հեղինակի՝ ուսումնական ծրագրերը հարկավոր է կազմել ուսանողների պահանջմունքները հաշվի առնելով, քանի որ առանց դրանց հնարավոր չէ թիրախավորել ուսանողների իրական սպասելիքները: Ատենախոսի կողմից ընտրված ուսանողների պահանջմունքների փուլային վերլուծությունը, ըստ իս, արդյունավետ է, քանի որ դրա միջոցով պարզ է դառնում, թե ինչ ուղղությամբ է հարկավոր զարգացնել կրթական ծրագրերը: Նույն գլխում ատենախոսը քննարկում է CLIL-ի՝ մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնասիրության մոտեցման կիրառումը, սակայն CLIL-ը ավելի շատ վերաբերում է այլ դասընթացների անգլերենով սովորելուն, որին ԺՊ Տեր-Վարդանյանն իր ատենախոսության մեջ վերլուծական անդրադարձ չի իրականացնում: Սակայն լավ կլիներ, որ հեղինակը այդ խնդիրը ևս պահեր իր հետազոտական հետաքրքրությունների կենտրոնում, քանի որ օտար լեզվի արդյունավետ ուսուցումը միանաշանակ պայմանավորված է ոչ միայն մասնագիտական անգլերենի դասընթացի, այլև մասնագիտական այլ առարկաների՝ անգլերենով սովորելու անհրաժեշտությամբ, քանի որ այն էականորեն ընդլայնում է սովորողների բառապաշարը, ընկալողական և վերարտադրողական կարողությունները, ստեղծագործական միտքը, որոնց շնորհիվ անհատն ի վիճակի կլինի իրականացնել արդյունավետ մասնագիտական հողորդակցում և հասնել վերլեզվական հաղորդակցական նպատակների իրագործմանը:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ վերտառված «Գործարար անգլերենի

լեզվանյութի ուսուցման հիմնախնդիրն արդի փուլում» Ժենյա Տեր-Վարդանյանը քննում է մասնագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքները գործարար անգլերենում, մասնագիտական բնագրերի ընտրության և ուսուցման հիմնախնդիրները գործարար անգլերենի դասընթացում: Այս գլխում հեղինակը ներկայացնում է իր տեսակետը մի շարք կարևոր հարցերի վերաբերյալ, մասնավորապես, նշում է, որ գոյություն ունի մասնագիտական անգլերենին բնորոշ հատուկ բառապաշար, մինչդեռ գործարար անգլերենին բնորոշ քերականություն չկա: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այդ դրույթի հետ կարելի է ոչ լիարժեքորեն համաձայնվել, քանի որ կան որոշակի քերականական կառույցներ, որոնք ավելի նախընտրելի են գործարար գրավոր կամ բանավոր խոսքում, մասնավորապես, եղանակավորող բայերի, կրավորական եղանակի ճիշտ ընտրությունը գործարար անգլերենի ուսուցման կարևորագույն մեթոդական հարցերից է: Այս գլխում հեղինակը նաև վերլուծում է գործարար խոսույթի հետ կապված մի շարք խնդիրներ, ներկայացնում դրա կարևոր այնպիս ոլորտներ, ինչպիսիք են միջմշակութային գործարար հաղորդակցումը, գործարար խոսույթը միջմշակութային համատեքստում, ինչպես նաև թյուրմբոնումը, ձախողումը և հաջողության պայմանները գործարար բանակցություններում: Ժենյա Տեր-Վարդանյանը նաև իր ատենախոսության այս հատվածում խոսում է ուսանողներին՝ գործարար խոսույթի չորս դարձվածային-իմաստային դաշտերը ներկայացնելու մասին, հոմանիշների համակարգի պատշաճ ձևով կիրառման մասին: Վերոգրյալ բոլոր հարցերն ատենախոսն ամփոփում է երկրորդ գլխի եզրակացության մեջ:

ԺՁ Տեր-Վարդանյանի թեկնածուական ատենախոսության առավելությունը և ձեռքբերումը նրա աշխատանքի երրորդ՝ «Գործարար անգլերենի ուսուցման մեթոդական համակարգը եվ նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը» վերնագրով գլուխն է, որտեղ հեղինակը մանրամասնորեն դիտարկում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումը՝ որպես գործարար անգլերենի ուսուցման հիմնական նպատակ՝ հիմնված լեզուների իմացության համաեվրոպական համակարգի, հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման տեխնոլոգիաները գործարար անգլերենի դասընթացում և գործարար անգլերենի փորձարարական ուսուցման արդյունքների ամփոփումը: Ժենյա Տեր-Վարդանյանը քննարկում է լեզվական նյութի հետ կապված խնդիրները, որոնք պետք է համապատասխան լինեն ուսանողների լեզվաիմացության մակարդակին, նրանց պահանջմունքներին, հետաքրքրություններին և լեզվական կարողություններին: Ատենախոսության մեջ ստացված արդյունքների

հուսալիության մասին է փաստում կատարած համեմատությունը՝ Իսպանիայի Գրանադայի համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները, որոնք հիմք կարող են հանդիսանալ դասավանդման արդյունաքվետ մեթոդաբանություն ընտրելու և ուսանողների հաղորդակցական կարողությունները զարգացնելու ժամանակ: Ստացված արդյունքները նաև բացահայտում են, որ օտար լեզուն, փաստորեն, մասնագիտական բաժնի ուսանողների համար հարկավոր է ոչ այդքան մասնագիտական հաղորդակցություն իրականացնելու, այլ ճամփորդելու, արտասահմանում սովորելու համար: Մտահոգիչ են հարցման արդյունքները նաև այն առումով, որ, օրինակ, Գրանադայի համալսարանի ուսանողների դասավանդման մակարդակը չի բավարարում անգլերենի B2 մակարդակին, միջոցառում հայկական բուհի արդյունքներն ավելի լավատեսական են: Փաստորեն, ՀՊՏՀ-ի ուսանողները կարիք ունեն ավելի շատ ժամանակ հատկացնել մասնագիտական հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված առաջադրանքների կատարմանը, իսկ Գրանադայի համալսարանի ուսանողները՝ հաղորդակցական կարողությունների զարգացմանը միտված վարժությունների համակարգի մշակմանը և ներդրմանը: Ժենյա Տեր-Վարդանյանի կողմից առաջարկվում է վարժությունների համակարգ, որը միտված է ձևավորել ուսանողների վերլուծական ընթերցանության, ստեղծագործաբար և քննադատաբար մտածելու, տեղեկատվություն փոխանցելու, ստանալու և մշակելու, գործարար թեմաներով տարբեր հիմնախնդիրներ ներկայացնելու կարողությունները: Հարցման արդյունքները պարզ ցույց են տալիս, որ ուսանողները հավանություն են տալիս CLIL կրթական մոտեցման վրա հիմնված առաջադրանքների կիրառմանը: Նրանք նշել են, որ «սովորել անելու» միջոցով մեթոդն ամենալավ մեթոդն է գործարար համատեքստում լեզու սովորելու համար:

Ատենախոսության եզրակացությունները լիարժեքորեն արտացոլում են կատարված աշխատանքը:

Այնուամենայնիվ, կուզենայի, որ ատենախոսության հեղինակը պատասխաներ մի շարք հարցերի, որոնց պատասխանը ձևակերպված չէ աշխատանքում:

1. Գործարար անգլերենի բառապաշարի հետ կապված հարցերը քննարկելիս, հեղինակը չի անդրադառնում մի այնպիսի կարևոր գործիքի, ինչպիսին է լեզուների իմացության համեմտական շրջանակը, որը հստակ նկարագրիչներ է սահմանում յուրաքանչյուր լեզվական մակարդակին համապատասխան լեզվական միավորների ընտրության համար:

2. Աշխատանքում չի խոսվում բառապաշարի այն հատուկ շերտի մասին, որը կապված է առցանց իրականության մեջ գործարար հաղորդակցման արդյունքում ձևավորված հետ:
3. Լավ կլիներ, որ հիմնական բառապաշարի առանձնացման համար հեղինակը կատարեր նաև գործարար տեքստերի կոնտենտ-վերլուծություն՝ ներկայացնելով հաճախ հանդիպող հասկացությունները, դրանք որակապես գնահատեր և գնահատական տալով՝ խոսեր դրանց գործնական անգլերենի դասընթացներում ներգրավելու մասին: Ճիշտ է, հեղինակը խոսում է լեզվական միավորների ընտրության համար կիրառվող գործաբանական և նշանաբանական հայեցակետերի մասին, գործաբանական կոմպետենցիայի ձևավորման համար գովազդային տեքստերի, նամակների, դիմումների, հրամանների կիրառման մասին, սակայն, մեր կարծիքով, դրանք ամենևին էլ բավարար չեն հաճախակի կիրառվող բառապաշարի շրջանակը ձևավորելու համար /Տես էջ 58:/
4. Հեղինակը չի խոսում նաև համավարակով պայմանավորված իրականության մեջ գործարար անգլերենի մեջ հաղորդակցական կարողությունների համար կիրառվող ընտրված մեթոդների նպատակահարմարության հիմնավորվածության մասին:

Ատենախոսության մեջ առկա են որոշ վրիպումներ, մասնավորապես, ենթակայի և ստորոգյալի թվի համաձայնեցման հետ կապված / Տես էջ 10/, որտեղ ներկայացվում է մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման նպատակն ու խնդիրները/Տե՛ս էջ 10/: Աշխատանքում առկա են նաև տառային/հասակցությամբ/ Տես էջ 68/, ոճական բնույթի վրիպումներ, մասնավորապես, «անգլերեն լեզվով» անգլերենի փոխարեն/էջ 23, 37, 71, 97, 103, 126-128 /, քանի որ անգլերենն արդեն լեզու է:

Մեր համոզմամբ, գիտահետազոտական աշխատանքները պետք է նպաստեն նաև մայրենիի հղկմանը և կատարելագործմանը, և նշված դիտողությունները կօգնեն ատենախոսին իր հետագա աշխատանքները դարձնելու գիտական լեզվի կիրառման տեսանկյունից ավելի պատշաճ, իսկ ձևակերպումներն ավելի ճշգրիտ:

Չնայած նշված թերություններին, ժՊ Տեր-Վարդանյանն իր թեկնածուական աշխատանքը շարադրել է գիտական լեզվով, հասկացական գործիքակազմի պահպանմամբ և ճշգրիտ օգտագործմամբ: Աշխատանքի ձևավորումը, բովանդակությունը, ստացված


արդյունքները լիարժեքորեն բավարարում են թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Հեղինակի կողմից օգտագործված գրականությունն արդիական է և առավելագույնս նպաստել է թեկնածուական ատենախոսության մեջ ձևակերպված բոլոր խնդիրների լուծմանը: Ատենախոսության սեղմագիրը արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և ամփոփ ձևով ներկայացնում առաջ քաշված խնդիրների լուծումը, իսկ տպագրված հոդվածները համապատասխանում ատենախոսության թեմային, նպատակին և խնդիրներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, եզրակացնում եմ, որ ատենախոսի «Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը հայալեզու լսարանում» ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Ժենյա Վազգենի Տեր-Վարդանյանն արժանի է իր կողմից հայցած՝ ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Լուսինե Հրանտի Ֆլյան
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Հաստատում եմ պաշտոնական ընդդիմախոս
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լուսինե Հրանտի Ֆլյանի ստորագրությունը

Փայանե Վանցետի Հակոբյան / 
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հյուսիսային համալսարանի գիտքարտուղար

19.05.2022

